Համաձայնագիր-3
19.02.2021թ. կնքված N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «18» հունվարի 2022թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Դրուզյա» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա.Խաչատրյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ու 4-րդ ենթակետերով, և հիմք ընդունելով 19.02.2021թ. կնքված N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 8-րդ չափաբաժնի առավելագույն գինը ավելացնել 4 297 994 ՀՀ դրամով, այն սահմանելով 54 297 994 ՀՀ դրամ, իսկ ծառայության մատուցման ժամկետը (վերջնաժամկետը) երկարաձգել 30 օրացուցային օրով՝ այն սահմանելով մինչև 2022 թվականի փետրվարի 17-ը:

1.2. Պայմանագրի 4.1 կետով նախատեսված Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը ավելացնել 4 297 994 ՀՀ դրամով, այն սահմանելով 163 239 170 (հարյուր վաթսուներեք միլիոն երկու հարյուր երեսունինը հազար հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ: :

1.3. Հաստատել նոր ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.4. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են 6-րդ և 9-րդ չափաբաժինների մասով կողմերի միջև 2022 թվականի հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ, իսկ 8-րդ չափաբաժնի մասով՝ 2022 թվականի հունվարի 3-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ :

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Դրուզյա» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	Ք.Տաշիր, Գետափնյա փ., տուն 15
ՀՎՀՀ 02647057	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011054013	Հ/Հ 1150017697737750
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 06957206
գործառնական վարչություն	տնօրեն
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____	Ա.Խաչատրյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/Կ.Տ/

Հավելված
Հաստատված է
N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5 գնման պայմանագրի
« 18 » 02 2022թ. կատարված փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

			Ծառայության											
			Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
չ/հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	անվանումը	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը տարի**
6	4239	Բնակտարածությունների մաքրման ծառայություններ-6	4208219	4208219	4208219	4208219	4208219	4208219	4208219	4208219	4208219	4208219	4208219	**4208219**
8	4239	Բնակտարածությունների մաքրման ծառայություններ-8	6590258	6590258	6590258	6590258	6590258	6590258	6590258	6590258	6590258	6590258	6590258	**6590258**
9	4239	Բնակտարածությունների մաքրման ծառայություններ-9	1152941	1152941	1152941	1152941	1152941	1152941	1152941	1152941	1152941	1152941	1152941	**1152941**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՏԱՐՈՂ
«Դրուզյա» ՍՊԸ
Ք.Տաշիր, Գետափնյա փ., տուն 15
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150017697737750
ՀՎՀՀ 06957206
տնօրեն

Ա.Խաչատրյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/